ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» այս համարից սկսում ենք տալ Բաֆֆիի «ԴԱՒԻԹ ԲԵԿ» անունով պատմական վեպը։

—

«Минута» լրագիրը լսել է որ եկող տարի կառավարութիւնը զիսաւորութիւն ունի հիմնել թիֆլիսում մի բարձրագոյն դպրոց տեխնիկական, երկրագործական և հանքարանական բաժիններով։

—

«Голосъ» լրագիրը սատիկ յարձակվում է «Московс. Вѣдом.» լրագրի դէմ, որովհետև այդ վերջին լրագիրը մի չատ անպատկ յօդուած է գրել Մոսկվայի ուսանողների դէմ վերջին ուսանողական անկարգութիւնների պատճառով։

—

Փարիզի ԱԽԱԼԲԱԼԱԲԸ տուել է «Մշակին» այս տարի 32 բաժանորդ։ Այդ բաժանորդների մէջ կան մի քանի սիկիներ և օրիորդներ։

—

«Մշակի» խմբագրութիւնը ահա երեք տարի է, այն օրից երբ մեր թերթը ամենօրեայ դարձաւ, վճարում է «Միջազգային հեռագրական ընկերութիւնը» տարեկան 1000 բուբլ հեռագրների համար։ Մինչև անգամ 1200 բուբլ էինք վճարում առաջին տարին։ Նոյնքան և աւելի են վճարում տեղական ռուս լրագիրները, որոնք չարքիր վեց անգամ են հրատարակվում։ Բայց կայ մեզանում մի լրագիր, որ ոչինչ չէ վճարում, բայց տալիս է ամենահաստաբերքիր հեռագիրները այնպիսի առաջարանով. «Թիֆլիսում ստացված են հետեւեալ հեռագիրները» և այլն։ Դա գրականական պարզ գողութիւն է։ Ժողովրդական առածը ասում է «Ձին գողէ, էշն ուտէ»։ Այդ տեսակ վարմունքի դէմ կարելի է դատ սկսել ինչպէս մի գողութեան դէմ։

—

Նիկոլայոս Ալիխանովից, որ նորերումս հրատարակել է «Երուանդ Երկրորդ» ազգերաբանութիւնը, խնդրում է մեզ յայտնել որ իր գրածքը հրատարակվեցաւ բազմաթիւ տպագրական սխալներով։ Դա պատճառը այն է, ասում է հեղինակը, որ նա Մայկոպ քաղաքում լինելով ստիպված էր տպագրել գիրքը Թիֆլիսում և յանձնել նրա տպագրութիւնը մի սրբագրողին։

—

Մեզ հաղորդում են Մեկրի գիւղից որ այդ գիւղի կանանց մասին «Մշակի» № 212 մէջ տպագրված լուրը բոլորովին սուտ է և զրպարտութիւն է։ Մեկրեցիները կը ցանկանային, որ թերթերը աւելի բարեխիղճ կերպով վարվէր իրողութիւնների հետ։

—

ԱՂՆԱԽԻՑ մեզ գրում են, որ նոյեմբեր ամսին Վեր.իցիխա աւանում վախճանվեցաւ ոմն Ստեփան Ցէր-Մովսիսեան, որի մայրը նրան եկեղեցու գաւազան տալու համար, ընծայել է նոյն տեղի կիսաչէն մնացած առաջնորդանի կառուցումն աւարտելու նպատակով 300 բուբլ։ Այս փողը յանձնված է գործակալ Սա. ազգքահանայ Ցէր-Սահակիանցին։ Ցեռնենք, ասում է թղթակիցը, երբ կը սկսվի դպրոցի չինութիւնը։

—

Դեկտեմբերի 7-ին Աղնախի թատրոնասէրները ասեցին երկու ներկայացումներ. մինը հայերէն, իսկ միւսը վրացերէն լեզուով։ Թղթակիցը ցաւում է որ թատրոնին հանկարող և օգնող անձինք չատ քիչ են Աղնախում։ Դեկտեմբերի 8-ին նոյն քաղաքի Կլուբի դահլիճում կայացաւ „Դեռնանների հովանաւորութեան ընկերութիւնը“։ Տիմնելու համար մի ժողով։ Ընտրվեցան նախագահ և քարտուղար։ Յուսալորից ընկերութիւնը կը սկսի իր գործունէութիւնը։

—

Ղեբսխանայ գաղթոցի մասին մեզ հաղորդում են հետեւեալը. „Գաղթոցի վերահսկումները բարեխղճաբար չեն վարում իրանց պաշտօնը, բացի մէկից։ Սեռ մասամբ նրանց կողմա և անվայել կերպով են վարում հաւակոյների հետ, փոքրացրին յիշոցներ տալով աշակերտներին։ Այդ խօսքերի ճշմարտութիւնը կարող է վկայել տեսչին պ. Գրիգոր Շահնազարեանց, որ տեսչի ադեղնա կամ լսաես է գաղթոցում։»

—

Այսօր, երեքշաբթի օր, Արծրունու թատրոնում կը լինի ամերիկեան խումբի ներկայացումն նոր պրոգրամմով։ Դարձեալ կը լինի զանազանների կոնցերտ։

ԸՐՏՈՒՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Լրագրների մէջ կարդում ենք հետեւեալ գաղտագրութիւնները իրանդական գործերի մասին։ Ինչպէս երևում է, անգլիական միջնորդների խորհուրդը դեկտեմբերի 2-ին գրական հեռաձայներ չունեցաւ։ Դեկտեմբերի 3-ին Լոնդոնից ստացված մի շարք հեռագիրները ապացուցանում են, որ միջնորդները չը կարողացան համաձայնութիւն կայացնել։ Ցեմբերլեն և Բրայտ միջնորդները սպառնում են հրաժարական տալ, եթէ կը գործադրվին ֆոբսաների պահանջած բացառական միջոցները և բացի այդ Անգլիայից զօրքերի նոր զունդեր են ուղարկվում Իրլանդիա։ Ստացված հեռագիրների ընդհանուր միտքը այն է, որ միջնորդների անհամաձայնութիւնը այնպիսի հարցի վերաբերութեամբ է պատահած, որ անկարելի է նրանց մէջ միջնորդութիւն կայացնել։

Եթէ Իրլանդիա նոր զօրքեր ուղարկելու լուրը ճիշտ է, դրանից երևում է, որ Գլադստոն հակված է ցնծիրներն և Բրայտ միջնորդների կողմը։ Միջնորդութիւնը մինչև այժմ աշխատում էր զօրքերի օգնութեամբ պաշտպանել ամենքին, ումբ վտանգ էր սպառնում։ Իրլանդիայի մէջ եղած զօրքերը առանձին յանձնարարութիւն ունեն։ Դրանք ուղարկված են պոլիցիայի այժերը մեծացնելու համար և կարող են գործել օրէնքների հանձնատ։ Դրանք պէտք է պաշտպանեն կառուցատէրերին և նրանց կառավարիչներին։ Ակնհայտ է ուրեմն, որ կառուցական շարժման ընդարձակվելու հետ զօրքերի թիւն էլ պէտք է աւելանայ, որպէս զի նրանք կարողանան ամեն տեղ գտնվել, որտեղ հարկաւոր կը լինեն։

Եթէ ընդունվին ֆոբսաների առաջարկած բացառական միջոցները, բոլորովին աւելորդ կը լինէր այդքան զօրքերի Իրլանդիա ուղարկելը։ Եթէ դադարեցնվէր անձնական ազատութեան (Habeas corpus) օրէնքը, կառավարութիւնը աւելի քիչ զօրքերով կարող էր երկրի մէջ հանգստութիւնը վերականգնել։ Միտինգների արգելելը, շարժման առաջնորդների կալանաւորելը միանգամից կը փոփոխէին իրլանդական գործերի այժմեան ցաւալի դրութիւնը։

Բայց հէնց որ ժամանակաւոր հանգստութիւն կը տիրէր երկրի մէջ, պահպանողականները և չափաւոր պատասխանները նորից կը պնդէին, որ կարիք չը կայ փոփոխել Իրլանդիայի մէջ այժմ գործող կառուցական օրէնքները և որ ամեն բան կարելի է առաջվայ պէս թողնել։ Բայտոի է, որ Կլադստոն այդ հանգամանքը չէ բաժանում։ Նրա գործունէութեան նպատակներից մէկն էլ իրլանդացի գիւղացիների վիճակի բարւոքումն է, ուրեմն հասկանալի է նրա զղջումը դէպի ֆոբսաների պահանջած բացառական միջոցները, որոնց գործադրելը կուշտիի կալուածական վիճաբանութիւնների մոնելը Իրլանդիայում մասնաժողովի մէջ, բայց ֆիրնանսների մինիստրը գեռ ոչինչ չէ ասել։ Լրագիրների հաղորդած լուրերը յիշեալ հարցը մոնելու մասին առհասարակ և մասնաւորապէս այդ հարցը տօնսարար թղթերի եկամուտների վրա դնելու մասին պէտք է փաստաժամ համարել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 25 կ., երկրորդ 92 ր. 87 կ., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 92 ր. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. 25 կ., երկրորդ 219 ր. 25 կ., արտերքին առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 62 կ., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր. 75 կ., ոսկի 8 ր. 8 կ։ Ռուսաց 1 բուբլ Լնդրօնի վրա արժէ 24½ պէնս, Ամստերդամի վրա 124,12 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 208 մարկ 37 պֆ., Վարշավի վրա 258¼ ֆրանկ։ Բօրսայի արամադրութիւնը ամուր է, բայց հանգիստ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 դեկտեմբերի։ „Бирж. Вѣдом.“ լրագիրը հաղորդում է, որ ֆինանսների մինիստրը վճռել է այլևս չէ հրատարակել թղթադրամ, եկող տարվանից հիանալար փոքրացնել։ Նրա շրջարերականութիւնը և դրա համար տարեկան 42 միլիոն է որոշված։ Նոյն լրագիրը լսել է, որ բիւջեյոր կազմված է 100 միլիոնից աւելի դեֆիցիտով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 դեկտեմբերի։ „Голосъ“ լրագիրը հաղորդում է, որ պետական բիւջեյի ապ Տարվի վերացնելու պատճառով կրած վնասը փոխարինելու համար գիտաւորութիւն կայ արտասահմանեան տպանքների մաքսահարկը 10% աւելացնել այժմեան հղացից, և ապի մաքսահարկը փոքրացնել 38 կոպեկից 20-ի։ Արտասահմանեան տպանքների մաքսահարկի բարձրացնելը և ապից վերցրածի փոքրացնելը չեն վերաբերվում այն տպանքներին և թիւրքաց և պարսից ապին, որոնք բերվում են կովկասեան ցամաք սահմանից։ Կասպեան երկրի հարաւային նաւահանգիստները և Ասարխանի նաւահանգիստը։ Արտասահմանեան տպանքների մաքսային պահեստների մէջ գտնելու համար ստացված փոքր գիտաւորութիւն կայ կրկնապատկել։

ԳՈՒՐԲԱՆ, 12 դեկտեմբերի։ Բոերները յարձակվեցին և բոլորովին ոչնչացրին 94-դ գնդի Ֆրեսորիա գնացող բաժինը։ 250 մարդուց 120 սպանված և վիրաւորված են, մնացածները գերի են առնված։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

այնքան չուտով պատրաստ է թօթափել այդ լուծը, եթէ հանգամանքները կը նպաստեին։ Միայն նայը զգոյշ է, հեռատես է, խորհող է, բայց չուտ վճռող չէ, և դրա մէջն է կայանում նրա բոլոր դանդաղկոտութիւնը։ Զգուշութիւնը նրա մէջ չանցաւոր երկչոտութեան կերպարանք է ստացել։ Նա երբէք չի սիրի մի գործ, եթէ հաւատացած չէ, թէ յաջողութիւնը իր կողմը կը լինի։ Ուր մի փոքր անզգուշութիւն, մի փոքր զգոյշութիւն, մի փոքր խենթութիւն անգամ կարող էր մեծ գործ կատարել,—այնուհետև նայը խնայող է և խելացի։ Նա միշտ իրան հեռու է պահում անմիտ բաղաքանդրութեան ցնորքներից, և այդ Սասիանցոսի կարծիքով, վատ էր։ Նրա թէօրիան չատ պարզ էր։ «Վատ մեռնել, կամ լաւ ապրել»։ Ճնչված, հարատարված, անապահով կեանքը նրան տանելի չէր։

Սասիանցոսը մի ուրիշ բան ևս գիտէր։ Նա գիտէր, որ հայ ժողովրդը կատարեալ ոչխարային բնաւորութիւն ունի. մէկը պէտք է առջևից գնայ, որ միւսները հետևեն նրան։ Բայց ով կարող էր լինել այդ մէկը։ Ով կարող էր աւանդներել ամբոխին։ Նա դիտեց բոլոր հայ իշխանները, բոլոր հայ մէլիքները և ամենից սատան ընդունելութիւն գտաւ։ Նա չէր հանդիպում ժողովրդի այդ գլխաւորներից և ոչ մէկին, որ համակրէր իր մտքերին։ Իսկ Իրաք—Ինքը ինչ կարող էր անել։ Ժողովուրդը հեղինակութիւն էր պահանջում ժողովրդի վրա ազդելու։ Նրան չարժէրաս համար պէտք էր փոքր ի չատ նշանաւոր մարդ լինել։ Թէև ինքն էլ նշանաւոր մարդերի կարգից դուրս չէր, բայց ինչ կարող էր անել մի փառասիրի իշխան, որի հայրենական ժառանգութիւնից մնացել էին մի ձի և մի ձեռք զէնքեր միայն։ Գենուազի ամբողջ գաւառը, որ նրա հօրերին էր պատկանում, ոչ մի զարձել էր մի իսկական սեպհականութիւն։ Իսկ ինքը անտուն, անտեղ, անօթեան թափառում էր երկրից երկիր, որպէս մի արիածանդիր ասպետ, որին իշնան էին տալիս միայն այն պատճառով, որ նրանից փախնում էին։ Այս մտածութիւնների մէջ խորասուզված, երիտասարդը քշում էր իր ձին դէպի Ագուլիսից դէպի Օրդուբաթ տանող ճանապարհով, և այնքան զբաղված էր իր մտքերով, որ կարծես, չէր նկատում անձրևի սարսիը, որ մանր, փոշեանման կաթիլներով մաղվում էր նրա վրա։ Երեկոյեան խաւարը գեռ այնքան չէր թանձրացել, որ գժուար լիներ առարկաները զանել։ Ամենամեծ երևում էր խոտ այգիների մէջ թաղված Օրդուբաթը։ Փոքր ինչ հեռու Ագուքը մի արծաթեայ ժապաւէնի նման գլորվում էր ձորի մէջով։ Գեսի միւս ափի վրա Քամ-քուշ լեռան բարձր գագաթը կիսով չափ ծածկված էր մթին ամպերի մէջ։ Կայծակը շէնչակի կերպով ճեղքեց այդ ամպերը և նրան հետևեցին սարսափի որոտ և գղրդիւն։ Կայծակ, սարսղջ, երկինքը թափ տուեցին և անձրևը մանդամից սկսեց հեղեղի նման թափվել։ Այդ ժամանակ միայն երիտասարդը սթափեցաւ իր մտայուզութիւնից, քաշեց ձիու սանձը, ձին կանգնեց, և նա սկսեց բաց անել իր վերարկուն, որ կապած էր երիվարի գաւակի վրա։ Նա ինամքով փաթաթվեցաւ վերարկուի մէջ, ոչ այնքան իր մարմնին հոգ տանելու համար, որքան իր զէնքերը թրջվելուց պահպանելու համար։ Այդ միջոցին հասան նրա երկու ուղեկիցները, որ բաւական յետ էին մնացել։ Երիտասարդը գաղափ դէպի նրանցից մէկը, ասելով.

—Ջումշուդ, դու դիտես քաղաքի որ փողոցումն է այն հրէայի տունը։

—Գիտեմ, պատասխանեց Ջումշուդը։

—Դէ, առաջ քշիր, մեզ տար ուզիդ դէպի այն կողմը։

Ջումշուդը իր ձին առաջ քշեց, երիտասարդ իշխանը հետևում էր նրան։ Եռեսից գալիս էր իշխանի միւս ծառան՝ Ազասին։

Քամին հետզհետէ սաստկանում էր և մրրիկը աւելի սպառնալի կերպարանք էր ընդունում. Գիւղացիները սարսափով փչում էին իրանց անասունները դաշտից դէպի տունը։ Լեռներից լսելի էին լինում հովիտների խառն ազաղակները։ Աստիճ անձրևների ժամանակ հեղեղը այդ կողմերում սովորական էր։ Նա սանում էր իր հետ ոչ միայն մարդիկ և անասուններ, այլ անգամ քարաժայռեր, որ պոկում էր սարերի կողերից։

Բոլորովին մութ էր, երբ իշխանը մտաւ Օրդուբաթ քաղաքը։ Փողոցներում ոչ ոք չէր երևում։ Բոլոր դռները կողպված էին։ Անձրևը, թէև փոքր ինչ մեղմացաւ, բայց տակաւին մաղվում էր։ Անցնելով մահմեդականների թաղերը, նրանք մտան հայերի թաղը։ Այստեղ բնակվում էին հրէաներ մի առանձին փողոցում։ Ջումշուդը իր ձին կանգնեցրեց տներից մէկի դրան հանդէպ, ցած իջաւ ձիուց և սկսեց դուռը բաղխել։ Երկար բաղխում էր նա, իսկ բաց անող չը կար։ Գիշերային այն տարաժամ պահուն հրէան հեշտութեամբ իր դուռը չէր բաց անի օտարականի առջև։ Կարծում էին, թէ ներսում մարդ չը կար։ Բայց դռան ճեղքերից ծրագի լոյս էր երևում։

—Կարծեմ, հարցրեց Ջումշուդը։

—Չէ, ասաց իշխանը,—կարելի է բաց անեն, բաղխեցէք։

Ներսից լսելի էին լինում տարբեր ձայներ և մարդիկներ երևում չէին։

—Ես այս բակումը բաց կանեմ, ասաց Ազասին, իր ձին մտցնելով տան պատին և կանգնելով ձիու թամբի վրա։ Պատը չատ բարձր չէր. ճարպիկ երիտասարդը ձեռքերով չանկուեց պատի անհարթ մակերևոյթը և կատաղի արագութեամբ թռաւ կտուրի վրա։ Մի բակէից յետոյ բակից լսելի եղաւ նրա ձայնը, որ վիճում էր տան տիրոջ հետ, պահանջելով դռան բանալին։

—Էյ... վայ... մի սպանիր... լսելի եղաւ հրէայի դառն հառաչանքը։ Երևում էր, նա մի բանի ապտակ կերաւ Ազասու ձեռքից։

Դռուռը բացվեցաւ. չէմբի վրա յայտնվեցաւ հրէան ճրագը ձեռին։ Նա անդադար միւս ձեռքը քսում էր իր երեսին, կարծելով, թէ Ազասու մատները դեռ կոպած էին այնտեղ։ Նա ինքն իրան մրմնջում էր.

—Չի էլ ասում, որ ապան է գալիս... ապայի առջև ով կը փակի իր գուռը... իմ տունը ապայի տունն է... անիծված... ախ, ինչ ծանր ձեռք ունի...

—Ես քեզ հազար անգամ ասեցի, պատասխանեց Ազասին,—բայց դու էլի չէիր ուզում բաց անել։

—Լաւ է, լաւ, խոսեց իշխանը վեր գալով ձիուց,—Հարանը լաւ մարդ է, նրան պէտք չէ ձեռնել։

—Չա, այդպէս, քո հոգուն մատաղ, պատասխանեց հրէան, և դառնալով դէպի Ազասին էլի կրկնեց.— Ախ, ինչ ծանր ձեռք ունի այդ անիծվածը...

Հրէան ձեռքը ուսերից յետոյ փոփոխեցել, մամ էր գալիս. նա ամեն կողմ ծալվում էր, գործ դնելով շղոգբրթութեան բոլոր ձեռները։ Նա մի քանի բոպէի մէջ ձիերը տեղաւորեց իր տան բակում և հիւրերին հրավիրեց մի և նոյն սենեակում, ուր ինքը իր կնոջ հետ ապրում էր։

(Կը շարունակվի)